National Press Club

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

ՄԱԱ

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

ՀԻՔՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մամուլի ազգային ակումբի, Իրավագետների եւ քաղաքագետների միության համատեղ կազմակերպած «Հայաստանը եւ ընտրությունները» ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում տեղի ունեցավ ընտրական օրենսգրքի նախագծերին նվիրված առաջին քննարկումը, որի թեման էր «Ընտրական հանձնաժողովի կազմավորման սկզբունքները»: Ընտրական հանձնաժողովների կազմավորման սկզբունքները այսօր քաղաքական շրջանակներում համարվում են ընտրական օրենսգրքերի ամենավիճահարույց հարցը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ հարցն էլ թելադրեց այն հանգամանքը, որ շրջանառության մեջ դրվեց երկրորդ՝ Արա Սահակյանի աշխատանքային խմբի հեղինակած նախագիծը: Հաշվի առնելով խնդրո առարկա հարցի շուրջ երկու իրարամերժ մոտեցումները, «Հայաստանը եւ ընտրությունները» ծրագրի կազմակերպիչները նպատակահարմար գտան քննարկումները սկսել ամենավիճահարույց հարցից:



Քննարկմանը ներկա էին լրագրողներ, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, ԱԺ իրավաբանական ծառայության ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորական խմբակցությունների եւ խմբերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ:



«Հայաստանը եւ ընտրությունները» ծրագիրը նպատակամետ է նպաստելու ներքաղաքական կյանքում փոխզիջման կայացմանը, քաղաքական առումով գրագետ ընտրողների եւ ընտրությունների նախաշեմին՝ քաղաքականացված հասարակության ձեւավորմանը: Այսեւայլ քննարկումների արդյունքում կարծեք թե պարզ է դառնում, որ ընտրական օրենսգրքերի նախագծերի ընդունման համար համաձայնության դաշտ պետք է որ ստեղծվի, եւ փոխզիջում այդ հարցում թերեւս կկայանա: Ընթերցողներին առաջարկվող «Ազգ» թերթի ներդիրում՝ իբրեւ հատուկ թողարկում, ներկայացված են դեկտեմբերի 20-ի ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում կայացած քննարկման նյութերը:

Ներդիրի հրատարակությունը ֆինանսավորել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) Երեւանի գրասենյակը: Ներդիրում օգտագործված են Արմենպրես լրատվական գործակալության ֆոտոխրոնիկայի լուսանկարները: Շնորհակալություն ենք հայտնում IFES-ին եւ Արմենպրեսի ֆոտոխրոնիկային՝ աջակցության համար:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
Մամուլի ազգային ակումբի նախագահ

digitised by A.R.A.R.@

